ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՄՍՔ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/7

ք. Սևան 15.05..2017 թ.

Սևանի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Ս. Մուրադյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մելիքյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից _____ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ----օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սևանի քաղաքապետարան	«Տեխշին» ՍՊԸ
ք. Սևան, Նաիրյան, 164	Ք. Երևան, Հր. Ներսիսյան, 10ա
ՀՎՀՀ-08601339	ՀՎՀՀ-00121656
Հ/Հ-900162285028	Հ/Հ 163518010852
ՀՀ ՖՆ ԳՎ	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ «Զեյթուն» մ/ճ
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
15.05.2017թ. կնքված N ԳՄՍՔ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/7
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
Սևան համայնքի փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման ծառայության մատուցում, ըստ տրված նախագծի, այդ թվում՝ 1. Հսկողական ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային փաստաթղթերին և շինարարական նորմերին: 2. Հսկողական ստուգման միջոցով աշխատանքների կատարման թերությունների բացահայտման և վերացման ապահովում: 3. Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների համապատասխանության ապահովում: 4. Մասնակցություն կատարողական ակտի կազմման աշխատանքներին: Աշխատանքների ծավալները և տեխնիկական բնութագրերը սահմանված են պատվիրատուի կողմից ներկայացված աշխատանքային նախագծով, կապալային աշխատանքների իրականացման թիվ ԳՄՍՔ-ՊԸԱԾՁԲ-2017/1 պայմանագրով և սույն պայմանագրի հավելված 1.1-ում ներառված ծավալաթերթով:	
Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
15.05.2017թ.	30.06.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սևանի քաղաքապետարան ք. Սևան, Նաիրյան, 164 ՀՎՀՀ-08601339 Հ/Հ-900162285028 ՀՀ ՖՆ ԳՎ	«Տեխշին» ՍՊԸ Ք. Երևան, Հր. Ներսիսյան, 10ա ՀՎՀՀ-00121656 Հ/Հ 163518010852 «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ «Զեյթուն» մ/ճ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1.1
15.05.2017թ. կնքված N ԳՄՍՔ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/7
ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը
1	3	4	5
	Զ.Անդրանիկի հրապարակի շրջակայք		
1	Ա/բետոնե ծածկի կտրում ֆրեզերային եղանակով՝հմիջ.=4սմ	մ²	90,0
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	7,2
3	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=5սմ,մինչև 5քմ. Մակերեսով	100մ²	0,18
4	Հիմքի իրականացում չափազատված խճից՝ հմիջ.=8սմ,	մ³	5,76
5	Ներքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բետոնից՝ հմիջ.=5սմ	100մ²	0,72
6	Ծածկույթի պատրաստում տաք մանրահատիկ ա/բետոնեից՝ h=5սմ	100մ²	0,72
7	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=72.0մ2	տ	0,3
8	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	1,2
	Սայաթ-Նովա փողոց (Երկաթգծի կայարանից մինչև Սայաթ-Նովա-Ս.Սևանեցու խաչմերուկ)		
1	Ա/բետոնե ծածկի կտրում ֆրեզերային եղանակով՝հմիջ.=4սմ	մ²	118,5
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	9,5
3	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=5սմ,մինչև 5քմ. Մակերեսով	100 մ²	0,18
4	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=7սմ,մինչև 5քմ. մակերեսով	100 մ²	0,42
5	Հիմքի իրականացում չափազատված խճից՝ հմիջ.=8սմ,	մ³	4,7
6	Նրքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բետոնից՝ հմիջ.=5սմ	100 մ²	0,59
7	Ծածկույթի պատրաստում տաք մանրահատիկ ա/բետոնեից՝ h=5սմ	100 մ²	0,59
8	Բիտումի տարածում «1000մ²-4.12տ բիտումի ծախսով, S=58.5մ²	տ	0,24
9	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	0,95
	Սայաթ-Նովա փողոց (Սայաթ-Նովա-Ս.Սևանեցու խաչմերուկից մինչև Սայաթ-Նովա փողոցի վերջնամաս)		
1	Ա/բետոնե ծածկի կտրում ֆրեզերային եղանակով՝հմիջ.=4սմ	մ²	31,2
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	2,5
3	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=5սմ,մինչև 5քմ. մակերեսով	100 մ²	0,12
4	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=7սմ,մինչև 5քմ. Մակերեսով	100 մ²	0,192
5	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	2,46
	Ս.Սևանեցու 1-ին հատված (Մշակույթի տնից մինչև Ս.Սևանեցի-Գրիբոյեդով խաչմերուկ)		
1	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	1,2
	Գրիբոյեդով փողոց (Գրիբոյեդով-Ս.Սևանեցի խաչմերուկից մինչև 3-րդ միկրոթաղամաս)		
1	Ա/բետոնե ծածկի կտրում ֆրեզերային եղանակով՝հմիջ.=4սմ	մ²	107,0
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	8,56
3	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=5սմ,մինչև 5քմ. մակերեսով	100 մ²	0,22

4	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=7սմ,մինչև 5քմ. մակերեսով	100 մ²	0,85
5	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	0,88
	Խաղաղության փողոց (Գործարանային փողոցի սկզբնամասից մինչև Գործարանային-Խաղաղություն խաչմերուկ ապա խաչմերուկից Խաղաղության փողոցով մինչև 3-րդ միկրոթաղամասի եզրնամաս)		
1	Ա/բետոնե ծածկի կտրում ֆրեզերային եղանակով՝հմիջ.=4սմ	մ²	31,0
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	2,48
3	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=5սմ,մինչև 5քմ. մակերեսով	100 մ²	0,28
4	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=7սմ,մինչև 5քմ. Մակերեսով	100 մ²	0,03
5	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	2,27
	Նաիրյան փողոց (Երթուղիների կայանատեղիից մինչև Վլ.Կարապետյանի անվան հրապարակի սկզբնամաս		
1	Ա/բետոնե ծածկի կտրում ֆրեզերային եղանակով՝հմիջ.=4սմ	մ²	232,0
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	18,6
3	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=5սմ,մինչև 5քմ. Մակերեսով	100 մ²	0,28
4	Ա/բետոնե ծածկի փոսային նորոգում H=7սմ,մինչև 5քմ. մակերեսով	100 մ²	0,16
5	Հիմքի իրականացում չափազատված խճից՝ հմիջ.=8սմ,	մ³	15
6	Ներքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բետոնից՝ հմիջ.=5սմ	100 մ²	1,88
7	Ծածկույթի պատրաստում տաք մանրահատիկ ա/բետոնից՝ h=5սմ	100 մ²	1,88
8	Բիտումի տարածում «1000մ²-4.12տ բիտումի ծախսով, S=188մ²	տ	0,78
9	Ճաքերի եզրերի բիտումապատում և լցնում	100գծմ	1,85
	Բարեկարգման աշխատանքներ		
1	Անձրևընդունիչների մաքրում ձեռքով	մ³	4,2
2	Շին.աղբի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	7,6
3	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	6
4	Անձրևընդունիչների և դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ³	1,1
5	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սևանի քաղաքապետարան
ք. Սևան, Նաիրյան, 164
ՀՎՀՀ-08601339
Հ/Հ-900162285028
ՀՀ ՖՆ ԳՎ

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխշին» ՍՊԸ
Ք. Երևան, Հր. Ներսիսյան, 10ա
ՀՎՀՀ-00121656
Հ/Հ 163518010852
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ «Զեյթուն» մ/ճ

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
15.05.2017թ. կնքված N ԳՄՍՔ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/7
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Տեխնիկական հսկողության իրականացման ծառայություն	-	-	-	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100 %	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սևանի քաղաքապետարան	«Տեխշին» ՍՊԸ
ք. Սևան, Նաիրյան, 164	Ք. Երևան, Հր. Ներսիսյան, 10ա
ՀՎՀՀ-08601339	ՀՎՀՀ-00121656
Հ/Հ-900162285028	Հ/Հ 163518010852
ՀՀ ՖՆ ԳՎ	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ «Զեյթուն» մ/ճ
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.